ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ЦЕНТР ПО ПРИЕМУ И РАБОТАМ С АБИТУРИЕНТАМИ

YEREVAN STATE UNIVERSITY
CENTRE FOR ADMISSION AND APPLICANT AFFAIRS

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԵՎ ԴԻՄՈՐԴՆԵՐԻ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

ՀՀ, Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1 • Республика Армения, Ереван, 0025, Алека Манукяна 1 • 1 Alex Manoogian, 0025, Yerevan, Republic of Armenia
(+374 10) 55-40-03, pre-ued@ysu.am, www.ysu.am

№ _____ « 28» փետրվարի 2025 թ.

Հարգելի տնօրեն

2025 թ. մարտի 29-ին ժ.11⁰⁰-ին Երևանի պետական համալսարանում անց է կացվելու դպրոցականների օլիմպիադայի I փուլը:

Օլիմպիադան կանցկացվի <u>հանրակրթական</u>՝

մաթեմատիկա, ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն, աշխարհագրություն, հայոց պատմություն, հայոց լեզու և գրականություն, ռուսաց լեզու, անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, ինֆորմատիկա

և <u>լրացուցիչ</u> կրթական

հայոց եկեղեցու պատմություն, տրամաբանություն, սոցիոլոգիա, պետության և իրավունքի հիմունքներ, էկոլոգիայի և կայուն զարգացման հիմունքներ, տնտեսագիտություն առարկաներից:

Լրացուցիչ կրթական առարկաներից օլիմպիադան կանցկացվի մեկ փուլով ԵՊՀ-ում՝ ապրիլի 12-ին ժ.11⁰⁰–ին:

«Ինֆորմատիկա» առարկայից օլիմպիադան կանցկացվի մեկ փուլով՝ մարտի 29 ժ.11⁰⁰-ին:

Օլիմպիադան նախատեսված է 12-րդ դասարանի աշակերտների համար:

Յուրաքանչյուր աշակերտ օլիմպիադային կարող է մասնակցել միայն 1 առարկայից:

Օլիմպիադայի մասնակիցները մարտի 29-ին ժ.10.30 պետք է հավաքվեն ԵՊՀ կենտրոնական մասնաշենքի բակում:

Խնդրում ենք Ձեզ մինչև մարտի 15-ը հաստատել Ձեր աշակերտների մասնակցությունը ըստ առարկաների՝ նշելով աշակերտի ազգանուն, անուն, հայրանունը, դասարանը և այն ուղարկել հետևյալ հասցեով.

ՀՀ, 0025 ք.Երևան, Ա.Մանուկյան 1, ԵՊՀ
Ընդունելության և դիմորդների հետ տարվող աշխատանքների կենտրոն
հեռ. (37410) 55-40-03, 060-710-132
E-mail: pre-ued@ysu.am

Մասնակիցների հայտերը կարող եք ուղարկել էլ.փոստով:

I փուլի հաղթողները կմասնակցեն օլիմպիադայի II փուլին, որը տեղի կունենա ապրիլի 12-ին ժ.11⁰⁰-ին Երևանի պետական համալսարանում:

ԵՊՀ Օլիմպիադայի արդյունքները տեղադրված կլինեն ԵՊՀ-ի կայքում /www.ysu.am՝ Ընդունելություն → Դիմորդների հետ տարվող աշխատանքներ → Օլիմպիադաներ դպրոցականների համար/:

<u>Ի գիտություն</u>

ԵՊՀ գիտական խորհրդի որոշմամբ օլիմպիադայում <u>հանրակրթական</u> առարկաներից հաղթած (I, II և III կարգի դիպլոմների արժանացած) աշակերտներին Համալսարանի վճարովի համակարգ ընդունվելու դեպքում առաջին կուրսում կտրամադրվի համապատասխանաբար 50, 40 և 30 տոկոս ուսման վարձի զեղչ:

Օլիմպիադայում <u>լրացուցիչ</u> կրթական առարկաներից հաղթած աշակերտներին կտրվեն կրթաթոշակներ:

ԲԱԺՆԻ ՎԱՐԻՉ՝ Ք.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ